


“ԹՈՂ ՏՈՒՒՔ ՄԱՆՐ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՍՒ ԳԱՆ.” ԳՈՒԿ. ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ ԻԵ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՄԱՅԻՍ 1, 1896

ԹԻՒ 5



զարմանալի տեսարանները և ձմեռն անցնել էջիպտոսի տաք և չոր կլիմային մէջ:

Բայց դուք թերևս կ'ուզէք Տերապլէն, այսինքն Նեղոսի բերնէն, անդին նայիլ և յիշել թէ ձեր ծննդէն հարիւրաւոր և հազարաւոր տարիներ առաջ ի՞նչ պատահած է հոն: Կրնաք միտք բերել թէ խեղճ փոքրիկ Յովսէփը հոն եկաւ այն խիստ տաք և փոշոտ ճամբէն իր անձնասէր և չար եղբայրներէն զինք ծախու առնող իսմայէլացիներուն ուղտերուն հետ: Սակայն կը կարծեմ թէ ամենէն աւելի պիտի ուզէք տեսնել մեծ գետը, Նեղոսը, և յիշել թէ քանի մը հազար տարիներ առաջ, պայծառ առաւօտ մը, քանի մը տիկիներ և օրիորդներ որ գետին եղբրքը կը պառտէին, գտան սիրուն փոքրիկ աղեկ մը գեղեցիկ փոքրիկ նաւակի մը մէջ, ճիշդ այնչափ երկայն որ կարող ըլլար իր ոտքերը երկնցնել անոր մէջ, և այն հարուստ կիները առին զանիկա իր կանաչ անկողինն մէջէն և սիրեցին, վասն զի շատ անուշիկ և առոյգ էր: Գիտէք որ այն աղին անունը Մովսէս էր և նա մեծ մարդ մը եղաւ, և իր ժողովուրդը ետ տարաւ Քանան զոր Աստուած խոստացած էր անոնց իբրև ժառանգ ու թիւն: Բայց կ'ուզեմ որ յիշէք նաև թէ գետին եղբրքը բուսած բարձր չամբերուն և կիներնորուն մէջերը փոքրիկ աղջիկ մը կը կայնէր և կը հսկէր իր փոքրիկ եղբոր վրայ որպէս զի չարիք մը չպատահէր անոր: Երբ գեղեցիկ օրիորդը սնուցիչ մը ուզեց, այս փոքրիկ աղջիկը վաղեց և բուն մանուկին մայրը կանչեց, և այսպէս Մովսէս մանուկը սնաւ իր մօր:

ՏԵՍԱՐԱՆ ՄԸ ԳԱՀՈՒՅԻ ՄԷՋ
ՊԱՏԵՂԱՄԷ ՄԸ

Սիրելի մանուկներ, եթէ այս պատգամին վրայ կանգնէիք, ի՞նչ կը կարծէք թէ պիտի տեսնէիք: Չեր ոտքին տակը կը կենայ Գահիրէ մեծ քաղաքը իր միջնաբերդով, իր մկրիթներով և անոնց գեղեցիկ աշտարակներով, սիրուն պարտեզներով և լայն փողոցներով, որոց մէջէն բոլոր ցերեկը կ'անցնին կր գառնան ժողովուրդներու բազմութիւն՝ աշխարհիս ամէն

կողմերէն: Ի՞նտիք ձիեր կը քաշեն գեղեցիկ կառքեր որոնք լեցուն են պալատական տիկիներով և օրիորդներով. պիտի տեսնէք օձ հմայողներ Հնդկաստանէ, ամէն տեսակ հնութիւն ծախողներ, պղնձեղէնի և մետաքսեղէնի առևտուր ընողներ, և զարմանալի կերպով քանդակուած փայտեղէն հողմարդներ որոց մասին այնքան համբաւաւոր է Գահիրէ: Պիտի տեսնէք Եւրոպացի և Ամերիկացի ճամբորդներ որոնք եկած են տեսնել

ղովուրդը ետ տարաւ Քանան զոր Աստուած խոստացած էր անոնց իբրև ժառանգ ու թիւն: Բայց կ'ուզեմ որ յիշէք նաև թէ գետին եղբրքը բուսած բարձր չամբերուն և կիներնորուն մէջերը փոքրիկ աղջիկ մը կը կայնէր և կը հսկէր իր փոքրիկ եղբոր վրայ որպէս զի չարիք մը չպատահէր անոր: Երբ գեղեցիկ օրիորդը սնուցիչ մը ուզեց, այս փոքրիկ աղջիկը վաղեց և բուն մանուկին մայրը կանչեց, և այսպէս Մովսէս մանուկը սնաւ իր մօր:

մէն, և անկէ սորվեցաւ ամէն բան իր ժողովրդին վրայով և թէ ինչպէս ինք պէտք էր որ բարի և իմաստուն մեծ նար և անոնց օգնէր: Բայց եթէ Մարիամ, վասն զի այս էր աղջկան անունը, հսկած չըլլար իր եղբօր վրայ, օրիորդը մէկդի կը տանէր զանիկա, և մայրը չէր կրնար խնամել զանիկա և անոր սորվեցնել իր ժողովրդին և Աստուծոյն վրայով: Մարիամի դժուար էր բոլոր ցերեկը գետին եզերքը կայնիլ տաք արևին տակը, երբ կրնար խաղալ: Բայց հնազանդեցաւ իր մօրը, և այսպէս ազատեց իր եղբայրը և

էր երբ բերանը բացաւ ժողովրդին առջև խօսելու, այլ ինքզինք անարժան զգալով այսպիսի պաշտօն մը վարելու և Աստուծոյ պատգամը խօսելու իր հայրենակիցներուն՝ իրենց ազգային պատմութեան այնպիսի կենսական փափուկ վիճակի մը մէջ: Նոքսի վրայ հերետիկոսութեան կասկած ըլլալով վաճառեցաւ մէկ տեղէն միւսը, մինչև որ վարժապետ եղաւ առանձին ընտանիքի մը մէջ: Այս պաշտօնին նուիրեց ինքզինք իր բոլոր ոյժով: Մասնաւորապէս աշխատեցաւ հրապօրիչ և ազդու կերպով պատ-

համալսարանին փրոֆէսորները, կանոնիկոսներ և արեղաներ, և իր ժամանակի նշանաւոր լրբերէն և տիկիներէն շատը: Եւ սակայն ինք Աւետարանին ճշմարտութիւնները կը հրատարակէր իր բոլոր աշխոյժովը, մի և նոյն ժամանակ գիտնալով թէ ճշմարտութիւնը իր հասկցածին պէս բացատրելով դառն հակառակութիւն կը յարուցանէր իրեն դէմ: Այս բաներէն անմիջապէս ետքը Սբ. Անդրէասի ամբողջ առնուեցաւ Գաղղիական նաւատորմի մը ձեռքով և ճոն Նոքս գերի բռնուեցաւ: Գաղղիացոց



ՃՈՆ ՆՈՔՍ ԿԸ ՔԱՌՈՋԷ ԺՈՂՈՎՐԴԻՆ ԵՐԵՒԵԼԻՆԵՐՈՒՆ ԱՌՋՆԻ

ժողովուրդը: Չէ՞ք ուզեր ամենքդ ալ Մարիամի պէս միշտ հնազանդ ըլլալ ձեր ծնողներուն, և այսպէս օրհնութիւն ըլլալ անոնց և բոլոր ձեր բարեկամներուն:

ՃՈՆ ՆՈՔՍ

Երբ ճոն Նոքս Սկովտիացի մեծ Բարեկարգիչը թաղուեցաւ, ատելութեան խնամակալը ըսաւ, «Հոս կը պառկի մէկը որ երբեք չվախցաւ մարդէ»: Եւ սակայն ճոն Նոքս կը զարհուրէր քարոզիչ ըլլալու խորհուրդէն, ոչ թէ պատանեկան երկչոտութեան պատճառաւ, վասն զի ճոն Նոքս քառսուն տարեկանէն աւելի

րաստելու Սուրբ Գրոց դասերը և ֆրիստոնէականը: Այնպիսի ժամանակ մին էր այն՝ որ ինք ապահովութեան համար ապաստանած էր Սբ. Անդրէասի ամբողջը, և այսպէս տղոց կը սորվեցնէր հանրային տեղի մը մէջ, ուր իր քարոզիչ կարողութեանը տեղեկացան Սըր Տէյվլա Լինտոսէյ բանաստեղծը, և ուրիշ երևելի աշխարհականներ, որոնք իրենց հովիւ հրաւրեցին զանիկա: Եթէ մէկը տարակուսէր իր քաջութեան վրայ, պէտք էր լսել անոր խօսքերը քիչ ժամանակ ետքը Սբ. Անդրէասի թեմական եկեղեցիին մէջ, իր ունկնդիրներուն մէջ կը գտնուէին

մէկ ցուկանաւին յանձնուեցաւ. տարիէ մը աւելի ժամանակ ցուկանաւի մէջ աշխատող գերիի մը թշուառ վիճակը ունեցաւ: Թէպէտ հիւանդութեամբ մեծապէս տկարացաւ, երբ վերջապէս ազատ արձակուեցաւ՝ քաջութեամբ իր քարոզութեանն սկսեց նորէն: Շատ չանցած կանչուեցաւ Եդուարդ Զի մատրանապետութեան պատուաւոր պաշտօնին: Լուտերի պէս կը սիրէր «ձրի շնորհքով փրկութիւն» հրատարակել: Ինքը փրկութեան աստուածաբանութիւն մը ունէր, որուն արժէքը ինք գիտէր անձամբ: Կ'ըսուի թէ այս եռանդուն ծերունիին մէջ շատ սրբազան տարր մը կար:

Իբրև իր վերջին քարոզին նիւթ ընտրեց խաչելութիւնը, որպէս զի իր պաշտօնէն խաչելութիւնը խաչին վրայով խօսելով աւարտէր: Սուրբ Գիւրգիս մէջէն վերջին տեղը զոր իր կնոջին ինդրեց կարգալ իրեն երբ մեռնէր, Յովհաննու Աւետարանին ժե. գլուխն էր:

ՉԱՐ ՄԱՏՆԵՐԸ

«Մայրիկ», ըսաւ Եղիսաբէթ, երբ կը հանուէր անկողին մտնելու համար, «այս մատը և այս բթամատը չարութիւն ըրին այսօր»: «Ինչո՞ւ, ի՞նչ ըրին», հարցուց մայրը: «Այս առտու պահանջէն չամիչ առին», պատասխանեց Եղիսաբէթ գլուխը կախած: «Մէկը ըսած է անոնց որ այդ բանը ընեն», հարցուց մայրը: Եղիսաբէթ մէկ կողմ դարձաւ և պատասխանեց կամացուկ մը, «Մէկու մը անոնց առանկ բան ըսելը չսեցի»: «Պատճառ կերան չամիչը», հարցուց մայրը: «Ոչ, անոնք չամիչները բերանս դրին», ըսաւ Եղիսաբէթ: «Բայց պէտք էր որ յանդիմանէիր զանոնք չամիչն առնելուն համար: Գիտես որ քու մատներդ իրաւունք չունէին չամիչն առնելու», ըսաւ մայրը: «Ուրեմն ի՞նչ ընելու եմ հիմա, այս փոքրիկ ձեռքը պատժելու համար», հարցուց մայրը: «Միայն մէկ մատս և բթամատս էր», ըսաւ Եղիսաբէթ և լալ սկսեց: «Ուրեմն ատոնք փոքրիկ գողեր են: Վըստահելի չեն, ուստի պէտք է որ բանտարկենք», ըսաւ մայրը:

Եղիսաբէթ շատ տխուր կ'երևէր երբ մայրը սև լաթ մը գտնելով կը փաթթէր մատին շուրջը, յետոյ բթամատին շուրջը: Չեռքը շատ ցաւեցաւ, բայց անկողին մտաւ, և երբ առտուն անկողնէն ելաւ, տակաւին կապուած էին մատը և բթամատը:

Հիմա այս տղեղ սև լաթը քակե՞մ մատերէս, հարցուց աղջիկը մօրը երբ լուացուելու կ'երթար: «Ոհ, ոչ», ըսաւ մայրը: «Տակաւին նշան մը չենք տեսներ թէ անոնք կը ցաւին իրենց յանցանքին վրայ, ուստի չենք կրնար փտահիլ անոնց: Նորէն պէտք է որ բանտ երթան»: «Կարծեմ կը ցաւին», ըսաւ Եղիսաբէթ: «Բայց իրենք այդպէս չեն ըսած», պատասխանեց մայրը:

Այսպէս Եղիսաբէթ նախաճաշի իջաւ տձև սև լաթի կտորը մատներուն վրայ փաթթուած: Շատ չկրցաւ ուտել, վասն զի ամէն անգամ որ իր պատառաքաղը կը գործածէր, հայրը հեգնոտ աչքով մը վրան կը նայէր: Նախաճաշէն շուտ ետքը Եղիսաբէթ

մօրը քով վազեց աշուրները արցունքով լեցուն:

«Մայրիկ», ըսաւ հեկեկալով, «ես չարութիւն գործել տաւի մատերուս, շատ կը ցաւիմ, ներէ ինձի»:


Այն ատեն մայրը սև լաթը հանեց մատներուն վրայէն, մատները համբուրեց, և Եղիսաբէթ մէկդի վազեց մեծ ուրախութիւնով:

ԻՐ ՏԵՐԸ ԿԱՐՕՏՅԱԾ ՇՈՒՆԸ

Քու դէմքդ բառերու պէս պարզ և յայտնի կերպով կը հարցնէ՞ թէ «Ո՞ւր է տէրս, ո՞ւր փնտռելու եմ

ետքը, այս խօսքերն ըսող տիկինը, իր ամուսինը դիմաւորելու գնաց, բայց մինակ դարձաւ ետ: Երբ շունը իր տիրուհին առջև ցատկեց զանկա դիմաւորելու համար, իր թաւամազ գլուխը խոնարհեցուց՝ երեսին վրայ տխրութիւն և վիշտ նկարուած: Մէկ ակնթարթի մէջ շունը իմացաւ իրենց վիշտը: Բայց շանը համր գգուանքները ամէն ալ պարտապէս տիկնոջ կոտրած սիրտը մխիթարելու համար: Ըսաւ թէ «Այ պիտի չգայ, մեռեալներուն մէջ է»:

Բայց երբ օրերը կամաց կամաց կ'անցնէին տխրութիւնով ծանրացած,



զանկա: իր աթոռը օրերով պարտապ մնացած է:» Կը փափաքիմ ըսել քեզի — նա պիտի գայ նորէն իր Ովկիանոսի ճամբորդութենէն: Պիտի գայ առողջութիւնը նորէն ձեռք բերած: Զանկա ուրախութիւնով պիտի դիմաւորենք: Դուն ալ պիտի դիմաւորես զանկիկ, հաւատարիմ ժողիս: Երբ նորէն տեսնենք իրար, շուտով պիտի մոռնանք բաժանումը և լացերը: Մինչ կը սպասենք, դուն քու ցաւդ պիտի կրես, խեղճ շուն, բայց ուրախ եմ, վասն զի գիտեմ որ սիրելի տէրդ շուտով տուն պիտի դառնայ:

Ուրիշ օր մը, ամիսներ անցնելէն

քաջալերական խորհուրդ մը եկաւ անոր միտքը: Իբր թէ մէկը որ կը սիրէր զինք և կը հոգար իրեն համար, մեղմութեամբ ծռելով իր վրայ, սա մխիթարական խօսքերը շնջեց, «Գիտեմ քու երկրաւոր ցաւդ, բայց ես չեմ ցաւիր, վասն զի գիտեմ որ եթէ դուն ալ կարող ըլլայիր տեսնել քու սիրելիդ հոս երկինքին մէջ, սրտիդ տրտմութիւնը ցնծութեան պիտի փոխուէր, և երբեք պիտի չուզէիր որ նա ետ գար նորէն: Չեմ կրնար հասկնալ քեզի թէ իմ սէրս և կարողութիւնս սահման չունին, վասն զի դուն բանտարկուած և կաշկանդուած ես երկրաւոր կեանքիդ շղթաներովը:

«Մինչ դուն կը վշտանաս, ես ու ըրախ եմ, վասն զի գիտեմ որ քու սիրելիդ իմ քովս կը բնակի այն խաղաղութեան մէջ ուր չկան մահկանացուներու յատուկ եղող խռովութիւնները և սազանայները:»

ՕՏԱՐԱԿԱՆ ՓՈՒՔՐԻԿԸ

Կիրակնօրեայ դպրոցի միսիոնար մը երբ կը խօսէր կիրակնօրեայ դպրոցի մը մէջ, պատուած հանդերձներ հազած և բուսակի ոտքով փոքրիկ աղջիկ մը տեսաւ որ անկիւն մը քաշուած էր, իր արևէ այրած փոքրիկ երեսը ծածկած էր ձեռքերուն մէջ, և սիրտը պատուելու չափ կը հեկեկար: Բայց շուտով իբր տասնմէկ տարեկան ուրիշ աղջիկ մը ելաւ իր տեղէն և անոր քով գնաց: Ձեռքէն բռնելով դուրս հանեց դանիկա տարաւ վտակի մը քով և նստեցուց կոճղի մը վրայ: Յետոյ այս բարի Սամարացին ծունկի վրայ գարով անոր կուշտը, հանեց անոր մաշած գլխարկը, և իր ձեռքերով ջուրին մէջ խոթելով անոր բորբոքած աղուքները և արցունքով շաղախուած երեսները լուաց, յարգարեց խառնափնթորած մազերը և սիրով ու զուարճութեամբ կը խօսէր բոլոր աները:

Փոքրիկին երեսը պայծառացաւ, արցունքները դացին և ժպիտ մը եկաւ անոր վարդագոյն բերնին բոլորտիքը: Միսիոնարը որ հետևած էր այս երկուքին, յառաջ քայեց և «Սիրելի աղջիկս, ատ քու քոյրդ է» ըսաւ: «Ոչ, տէր, ես քոյր չունիմ» պատասխանեց աղջիկը մեղմ և անկեղծ նայուածքով: «Ձեր գրացիին տղոցը մէկն է ուրեմն» ըսաւ միսիոնարը, «կամ թերևս փոքրիկ աշակերտակից մը»: «Ոչ, տէր, օտարական մըն է, չեմ գիտեր թէ ուրիշ է կաւ: առաջ երբեք տեսած չէի»: «Ուրեմն ի՞նչպէս եղաւ որ դուն դուրս հանեցիր դանիկա և այսպէս հոգ տարիր անոր, եթէ չես ճանչնար զինքը»: «Վասն զի օտարական է, տէր, և բոլորովին մինակ կ'երևնար, և մէկու մը պէտք ունէր որ օգնէր իրեն»:»

Թեթեւ բան չէ մարդասիրութիւն ցուցնել օտարականի մը: «Դուք օտարականին սիրտը գիտէք» ըսաւ Մովսէս Իսրայելի: Անոնց արդելուած էր օտարականը նեղել: Աստուծոյ ժողովուրդը «օտարներ ու պանդուխտներ են երկրի վրայ»: Եւ վերջին մեծ օրը «Թագաւորը իր աջ կողմը եղողներուն պիտի զօնէ, եկէք, իմ Հօրս

օրհնածները, աշխարհի սկիզբէն ձեռք համար պատրաստուած թագաւորութիւնը ժառանգեցէք, ինչու որ... օտարական էի, և զիս ներս առիք:»

ՄՈՒՌ ԿՈՂՄԸ ԴՈՒՐՄ

Յակոբիկ դաժան տղայ մըն էր, բանով մը գոհ չէր ըլլար: Իր մայրը նախաճաշին համար ամենէն ընտիր պատուները կու տար անոր, կու տար ամենէն գեղեցիկ խաղալիքները, բայց Յակոբիկ միշտ դաժան էր և կը տըրտընջար: Վերջապէս մայրը ըսաւ, «Յակոբիկ, շիտակ սենեակդ դնա, և բոլոր հանդերձներդ ներսի կողմը դուրս դարձնելով հազիր»: Յակոբիկ զարմացած կը նայէր: «Յակոբիկ, ըրէ ըսածիս պէս» կրկնեց մայրը: Յակոբիկ պէտք էր որ հնազանդէր, պէտք էր որ գուլպաներուն ներսը դուրս դարձնէր և այնպէս հագնէր, նոյնպէս իր վերարկուն, նոյնպէս իր վարտիքը, նոյնպէս իր օձիքը:»

Երբ մայրը սենեակը մտաւ, հոն Յակոբիկ ծաղրելի տղու մը կերպարանքով, հանդերձներուն կարերը, խորտաբորտ ծայրերը և եղբերները դուրս, կը կայնէր հայելին առջև, խորհելով թէ արդեօք ի՞նչ էր մօրը միտքը: Բայց բան մը կը զգար իր ներսի դին: Յետոյ մայրը հայելին առջև դարձնելով զնա ըսաւ, «Դուն ամէն օր այսպէս կ'ընես, ամէն բանի գէշ կողմը դուրս կը ցուցնես: Կ'ուզե՞ս որ քու բաներդ այսպէս ըլլան, Յակոբիկ»: «Ոչ, մայրիկ», պատասխանեց Յակոբիկ անկարող: «Չե՞մ կրնար շիտակ կողմը դարձնել զանոնք»: «Այո, կրնաս, եթէ ջանաս հաճելի եղածը խօսիլ, և հաճելի եղածը ընել: Պէտք է որ ընտելինդ և վարմունքդ այնպէս ընես ինչպէս որ կ'ուզես ընել հանդերձներդ: շիտակ կողմը դուրս բեր:»

ՄՈՎԷՆ ԱՆՈՅՑ ՋՈՒՐ ՀԱՆՆԸ

Աշխարհիս ամենէն տաք տեղերէն մէկը կը գտնուի Պարսից Դոցին սահմաններուն մէջ ուր կամ քիչ կ'անձրեւէ, կամ երբեք չանձրեւեր: Պահարինի մէջ տօթակէզ ծովեզերքը երբեք անոյշ ջուր չկայ, բայց այն տեղի բազմաթիւ բնակիչները հոն բնակելու հնարը գտած են: Շատ մը աղբիւրներ կը բխին ծովուն յատակէն: Անոյշ ջուրը ձեռք կը բերուի ծովուն տակը իջնելով: Սուղակը (որսը՞) նաւակին մէջ կը նստի, իր ձախ թե-

ւին վրայ կը փաթթէ խոշոր՝ այծու մորթէ պարկ մը, ձեռքով անոր բերանը կը բռնէ: յետոյ աջ ձեռքը կ'առնէ ծանր քար մը, որուն կցուած է զօրաւոր լար մը, և այսպէս պատրաստուած՝ կ'իջնէ ծովուն յատակը: Երբ յատակը կը հասնի, իսկոյն կը բանայ պարկը զօրաւոր կերպով ցայտող անոյշ ջուրին վրայ, յետոյ անմիջապէս վեր մուտղ հոսանքին վրայ կը նետուի (նոյն ժամանակ գոցելով պարկին բերանը) և անոր միջոցաւ վեր՝ նաւակը կ'ելլէ: Այնուհետեւ քարը վեր կը քաշուի, և սուղակը, շունչ մը առնելէն ետքը, նորէն կ'իջնէ ջուրին տակը: Կարծուի թէ ծովուն տակը գտնուող այս աղբիւրներուն սկզբնապէս բլուրներուն մէջ է որ իբր վեց հարիւր մղոն հեռին կը գտնուին:

ՀԱՐՅՈՒՄՆԵՐ ՍՈՒՐԲ ԳԻՐՔԷՆ

1. «Յախտեանական վէժ» գիտէ՞ք թէ Սուրբ Գրոց մէջ ո՛ւր կը գտնուի այս խօսքը:
2. Ի՞նչ անուններ կը տրուին Նոր Կտակարանին մէջ Հանգստեան Օրուան:
3. «Վաղուան համար մի պարծե՛նար»: Ի՞նչ առակ կը լուսարբանէ այս առածը:
4. Ո՛ւր կը գտնուին այն երեք ծանօթութիւնները, որոնք կը յիշուին երկրոտ աշակերտի մը համար:
5. Յիշէ՛ Աղէքսանդրոսի և Ռուփոսի հօրը, Լաւողեայի թոռան և Հոսիդէի տան տիկնոջ անունները:
6. Ե՞րբ արթթք մատուցուեցաւ դաշտի մը մէջ, լերան մը վրայ, գետեզրի մը և ծովեզրի մը քով:
7. Գտէ՛ք այն խօսքերը, որովք երկու առաքեալը կանխաձայնեցին իրենց մօտալուտ մարտիրոսութիւնը:
8. Տուէ՛ք վեց վկայութիւններ, որոնք ցուցնեն թէ Արևելքի մէջ տանիքները հարթ են:
9. Ո՛ւր կը կարգանք աշխարհի ստեղծագործութեան համար եղած ուրախութեան վրայ:
10. Ո՞վ ըսած էր, որ «Սուրբ Գրոցը պիտի ըլլայ»:
11. Յիշեցէ՛ք այն համայնքը, որուն մէջ նշանակուած էր զայնքան և իր որդւոց պարտականութիւնը:



Ամերիկայի Մեթոնաթաց Ընկերութեան կողմէն, Արամուստէր ձ. Բ. ԿԻՒՆ Տնօրէն—Խմբագիր Հ. Ս. ՊԱՐՆԸՄ Ֆինանսներու Ինքուշտ, Ամերիկան Խան

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱՊՈ ՊՅՈՒՆԵԱՆ